

ՄՐՑՈՒՅԹ #17-008

*Վայոց ձորի մարզի Աղնջաձոր համայնքի մածունի արտադրամասի սառնարանի
սարքավորումների՝ նրանց բաղադրիչ նյութերի մատակարարման, տեղադրման,
փորձարկման և երաշխիքային սպասարկման*

Գնառաջարկի հրավեր

Հրավերի ուղարկման ամսաթիվ՝ 21 ապրիլի, 2017թ.

Հայտերի ներկայացման վերջնաժամկետ՝ 15 մայիսի, 2017թ., ժամը 13:00

Հարգելի հայտատու,

1. Սույն հրավերով Հայաստանի Ֆուլեր Տնաշինական Կենտրոնը ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող ԱՐԴԻ ծրագրի շրջանակներում հրավիրում է Ձեզ ներկայացնելու սույն հրավերին կից **Հավելված 1-ում** ընդգրկված ապրանքների համար Ձեր գնառաջարկը: Հավելված 1-ում տրված են պահանջվող ապրանքների քանակները, իսկ տեխնիկական առաջադրանքում՝ պահանջները:

***Ապրանքները պետք է առաքվեն և տեղադրվեն Աղնջաձոր համայնքում:
Համապատասխան սարքավորումների՝ նրանց բաղադրիչ նյութերի երաշխիքային
սպասարկման ժամկետները սկսվում են հանձման-ընդունման ակտերի ստորագրման
օրվանից: Բոլոր ապրանքների առաքումը Վայոց ձորի մարզի Աղնջաձոր համայնք պետք
է կատարվի մատակարարողի միջոցներով և նրա հաշվին:***

*Սարքավորումների համապատասխանությունը որակի Եվրոպական և միջազգային
ստանդարտներին կդիտվի որպես առավելություն:*

2. Ձեզ գնառաջարկի նախապատրաստմանը աջակցելու նպատակով մենք կցում ենք առաջարկի ներկայացման օրինակելի ձևը:

ՀԱՅՏԻ ՆԵՐԿԱՅԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ՎԱՅՐԸ ԵՎ ՎԵՋՆԱԺԱՄԿԵՏԸ

Կից ներկայացված ձևաչափին համապատասխան պատրաստված Ձեր գնառաջարկը ընդունելի է տպագիր՝ կնքված փակ ծրարով:

Հայտը, որն իր մեջ պետք է ներառի գնառաջարկը և համապատասխան տեխնիկական փաստաթղթերը, առկայության դեպքում կատալոգ(ներ) և այլ տպագիր կամ առնչություն ունեցող նյութեր՝ **ներառյալ տեղեկատվություն ապրանքատեսակների արտադրության երկիրը,** պետք է **մինչև 2017 թ. մայիսի 15-ի , ժամը 13:00** ներկայացվի Հայաստանի «Ֆուլեր Տնաշինական Կենտրոնի» գրասենյակ, որի հասցեն է՝ ՀՀ, Երևան 0051, Կոմիտասի 59:

Հարցերի դեպքում կարող եք գրել sdallakyan@fullercenterarmenia.org հասցեին:

Հարցերի պատասխանները կտեղադրվեն կազմակերպության վեբ կայքի ARDI բաժնում՝ http://fullercenterarmenia.org/?page_id=310 համապատասխան մրցույթի **«*հարց ու պատասխան*»** հղման մեջ:

ՀԱՅՏԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀՐԱՀԱՆԳՆԵՐ

Փաստաթղթերը դրվում են ծրարի մեջ, որը ստանձվում և կնքվում է (եթե կիրառելի է) այն ներկայացնողի կողմից: Ծրարում ներառված փաստաթղթերը կազմվում են բնօրինակից և մեկ պատճենից: Փաստաթղթերի փաթեթների վրա գրվում են ԲՆՕՐԻՆԱԿ և ՊԱՏՃԵՆ բառերը:

Ծրարի վրա նշվում են՝

- ✓ Պատվիրատուի անունը և հայտի ներկայցման վայրը /պատվիրատուի հասցեն/
- ✓ Հայտարարության անունը և համարը
- ✓ Չբացել մինչև հայտերի բացման նիստը բառերը
- ✓ Հայտատուի/ընկերության անվանումը, գտնվելու վայրը, էլեկտրոնային հասցեն և հեռախոսահամարը

Գնառաջարկը պետք է լինի ստորագրված հայտատուի լիազոր ներկայացուցչի կողմից, լինի կնքված հայտատուի պաշտոնական կնիքով և դրված լինի փակ ծրարի մեջ, որի վրա պետք է լինի նշված հայտատու կազմակերպության անվանումը:

ՀԱՅՏԵՐԻ ԲԱՑՄԱՆ ՁԵՎԸ, ՕՐԸ և ԺԱՄԸ

1. Հայտերի բացումը տեղի կունենա մրցույթի վերջնաժամկետի օրը՝ Կոմիտաս 59 հասցեում (ՀՀ, ք. Երևան), ժամը 16:30-ին, հանձնաժողովի անդամների ներկայությամբ: Հայտատուները հրավիրվում են մասնակցելու հայտերի բացմանը:

2. Գնառաջարկները կգնահատվեն հանձնաժողովի կողմից և արդյունքները կհրապարակվեն կազմակերպության կայքում: Հաջողակ հայտատուն կտեղեկացվի լրացուցիչ:

3. Յուրաքանչյուր հայտատու կարող է ներկայացնել միայն մեկ գնառաջարկ: Բոլոր գնառաջարկները, որոնք ներկայացվել են սույն կանոնի խախտմամբ, կմերժվեն:

4. Գները: Գները պետք է առաջարկվեն ՀՀ դրամով՝ առանց ԱԱՀ-ի: ԱՄՆ ՄԶԳ ֆինանսավորմամբ իրականացվող «Գյուղի զարգացման արդի նախաձեռնություն» ծրագրի շրջանակներում կտրամադրվի ԱԱՀ-ից ազատելու բոլոր համապատասխան փաստաթղթերը:

4.1 Եթե ապրանքները հնարավոր է ներկրել Հայաստանի Հանրապետություն անմիջապես պատվիրատուի անունով՝ խնդրում ենք լրացուցիչ ներկայացնել գինը առանց մաքսատուրքի և ԱԱՀ-ի: Այս դեպքում կտրամադրվեն նաև մաքսատուրքից և ԱԱՀ-ից ազատվելու բոլոր համապատասխան փաստաթղթերը:

5. Գնառաջարկների գնահատում: Առաջարկները, որոնք կհամապատասխանեն տեխնիկական պահանջներին, կգնահատվեն արժեքների և տեխնիկական պահանջների համապատասխանելիության համեմատությամբ: Գնահատելիս Պատվիրատուն առաջնորդվելու է հետևյալ չափորոշիչներով՝

(ա) Առաջարկվող ապրանքների տեխնիկական մասնագրերի համապատասխանությունը սույն հրավերով ներկայացված պահանջներին

(բ) Առաջարկված գինը

(գ) Երաշխիքային սպասարկման ժամկետը

Գնառաջարկները գնահատելիս գնառառաջարկում անհամապատասխանություններ լինելու դեպքում Գնորդը յուրաքանչյուր առաջարկի համար կսահմանի գնահատման գինը՝ ուղղումներ կատարելու միջոցով, հետևյալ դեպքերում՝

(ա) որտեղ տարբերություն կա թվերով և տառերով արտահայտված գումարների միջև; տառերով գրված գումարը որոշիչ է,

(բ) որտեղ տարբերություն կա միավոր արժեքի և համապատասխան տողի ընդամենի միջև, որը ձևավորվում է միավոր արժեքի և քանակի բազմապատկման արդյունքում; նշված միավոր արժեքը որոշիչ է,

(գ) եթե մատակարարը հրաժարվում է ընդունել ճշտումները, ապա իր գնառաջարկը մերժվում է:

6. Վավերականություն: Ձեր գնառաջարկը պետք է ուժի մեջ լինի առնվազն քառասունհինգ (45) օր՝ սկսած գնառաջարկի ներկայացման վերջնաժամկետից:

6. Հայերեն լեզվով Ձեր գնառաջարկը պետք է ներառի բոլոր ապրանքների և ծառայությունների ծավալը և լինի անփոփոխ պայմանագրի գործունեության ողջ ընթացքի համար:

9. **Պատվերի Շնորհում:** Պատվիատուն պայմանագիր կկնքի այն Հայտատուի հետ, ում գնառաջարկը առավելագույնս կհամապատասխանի սույն գնառաջարկի հրավերի պահանջներին և վերոնշյալ չափորոշիչներին:

ԳՆԱՌԱՋԱՐԿԻ ՁԵՎ

_____ (Ամսաթիվ)

Ում: <<Ֆուլեր Տնաշինական Կենտրոն>> ԲՀԿ

ՀՀ, ք. Երևան, Կոմիտասի 59

Մենք (Կազմակերպության անունը) առաջարկում ենք առաքել #17-008 մրցույթի Տեխնիկական առաջադրանքում ներկայացված ապրանքները հետևյալ գնով

№	Անվանում	Քանակը	Միավորի գինը ՀՀ դրամ	Ընդամենը ՀՀ դրամ
1	Մառնարանի սարքավորումներ՝ ներառյալ առաքումը, տեղադրումը և երաշխիքային սպասարկումը	1 հատ	<i>(գումարը թվերով և բառերով)</i>	<i>(գումարը թվերով և բառերով)</i>
2	Ջերմամեկուսիչ դուռ իր վարագույրով 0.7X1.8	1 հատ	<i>(գումարը թվերով և բառերով)</i>	<i>(գումարը թվերով և բառերով)</i>
3	Ջերմամեկուսիչ դուռ իր վարագույրով 0.9X2.0	1 հատ	<i>(գումարը թվերով և բառերով)</i>	<i>(գումարը թվերով և բառերով)</i>
4	Ջերմամեկուսիչ դուռ իր վարագույրով 0.9X1.8	1 հատ	<i>(գումարը թվերով և բառերով)</i>	<i>(գումարը թվերով և բառերով)</i>

Պայմանագիրը ստորագրելուց հետո պահանջվող առաքումը ամբողջ ծավալով կատարելու համար մեզ անհրաժեշտ կլինի (օրերի քանակը) օր:

Մույն Գնառաջարկը և Ձեր կողմից գնառաջարկի ընդունման գրությունը հիմք կհանդիսանան մեր միջև Պայմանագրի կնքման համար: Միաժամանակ մենք հասկանում ենք, որ դուք Ձեզ իրավունք եք վերապահում չեղյալ համարել մրցույթը կամ սահմանփակվել հայտարարված աշխատանքների միայն մի մասի գնմամբ, եթե ներկայացված Գնառաջարկները գերազանցում են տվյալ նախագծի համար նախատեսված բյուջեն կամ չեն համապատասխանում չափորոշիչներին, կամ ներկայացված են խախտումներով:

Մեր գնառաջարկը ուժի մեջ է (օրերի քանակը թվերով և բառերով) օր՝ սկսած սույն մրցույթի համար սահմանված գնառաջարկների ներկայացման վերջնաժամկետից:

Մենք սույնով հաստատում ենք, որ այս Գնառաջարկը համապատասխանում է առաջարկի փաստաթղթերով պահանջվող Գնառաջարկի Վավերականությանը:

Լիազոր անձի ստորագրությունը _____

Ստորագրողի անունն ու պաշտոնը _____

Հասցե _____

Հեռ. _____

Էլ. փոստ _____

ՀԱՎԵԼՎԱԾ 1

Տեխնիկական առաջադրանք

Վայոց ձորի մարզի Աղնջաձոր համայնքում հիմնադրվող
մածունի արտադրամասի սառնարանների սարքավորումների,
նրանց բաղադրիչների, անհրաժեշտ նյութերի ձեռքբերման,
առաքման և տեղադրման

Խնդրում ենք հետևել տեխնիկական առաջադրանքում տրված բոլոր պահանջներին, քանի որ եթե առաջարկը հակասի ստորև նշված պահանջներին Ֆուլեր Տնաշինական Կենտրոնը իրավունք է վերապահում մերժել ներկայացված առաջարկը:

Առաջարկները պետք է ներառեն սարքավորումների առանձին ցուցակ (հիմնական, օժանդակ սարքավորումներ և բաղադրիչներ):

Լուծումը պետք է լինի միասնական և ընդգրկի բոլոր փուլերը՝

1. Սարքավորումների ձեռքբերում - մատակարարը ձեռք է բերում բոլոր հիմնական և օժանդակ սարքավորումները, ինչպես նաև անհրաժեշտ բաղադրիչները և նյութերը,
2. Տեղափոխում համայնք - մատակարարը իր հաշվին տեղափոխում է բոլոր սարքավորումները, բաղադրիչները, նյութերը համապատասխան համայնք,
3. Տեղադրում,
4. Փորձարկում,
5. Սկզբնական գործարկում

Այսինքն մատակարարումը կատարվում է <<под ключ>> եղանակով:

Առաջարկը պետք է ներառի բոլոր փուլերի և բոլոր էտապների հետ կապված ժամկետները և տեխնիկական մանրամասները իրենց առանձնացված գնացուցակով:

Բոլոր սարքավորումները, ինչպես նաև բոլոր նրանց բաղադրիչները պետք է լինեն բարձր որակի, որը պետք է ապացուցված լինի ՀՀ տարածքում հաջող կիրառման փորձով:

Հայտատուն պետք է ներկայացնի սարքավորումների երաշխիքային սպասարկման պայմանները և ժամկետները:

Ի հավելումն բոլոր այն հիմնական և օժանդակ սարքավորումների, բաղադրիչների և նյութերի, որոնց առկայությունը պարտադիր է սարքավորումների անխափան աշխատանքի համար, սարքավորումները պետք է հազեցված լինեն հուսալիությունը և սառնարանի կառավարման բարելավումը ապահովող համակարգերը, ինչպիսին են օրինակ ԹՐԹՐԱՄԵՂՄԻԶԸ, ՄԵԿ և ԵՐԿՈՒ ՏԵՂԱՆՈՑ ՃՆՇՄԱՆ ՌԵԼԵՆԵՐԸ, ԴԻՏԱՊԱԿԻՆ, ԲԱՐՁՐ և ՑԱԾՐ ՃՆՇՄԱՆ ՉԱՓԻՉՆԵՐԸ, ՋԵՐՄԱԿԱՐԳԱՎՈՐԻՉ ՓԱԿԱՆՆԵՐԸ, ԻՐԵՆՑ ՏԱՔԱՑՎՈՂ ՀԱՄԱԿԱՐԳՈՎ ՋՐԱՀԵՌԱՑՄԱՆ ԽՈՂՈՎԱԿՆԵՐԸ և այլն:

Սառեցման համար պետք է օգտագործվի R404 սառնագենտ, քանի որ, R22-ը ըստ Միացյալ Նահանգների Շրջակա Միջավայրի Պաշտպանության Գործակալության չի դիտարկվում որպես անվտանգ, թե՛ օգտագործման և թե՛ շրջակա միջավայրի համար:

Ամեն համայնքում թվային կառավարման վահանակներ (հագեցված լուսային ազդանշաններով) պետք է տեղադրվեն ինչպես հիմնական սարքավորմանը կից (հիմնականը), այնպես էլ սառեցվող խցերի մուտքի մոտ (օժանդակը): Վահանակների ծախսանյութերը պետք է լինեն այն արտադրողներից, որոնց սարքավորումների որակը արդեն ապացուցված է ՀՀ տարածքում օգտագործման փորձով:

Հաշվի առնելով ոչ կայուն հոսանքի մատակարարումը գյուղական համայնքներում սարքավորումները պետք է լինեն հագեցված ֆազային և հոսանքի պաշտպանիչներով:

Քանի որ սարքավորումները ապահովելու են շուտ փչացող մրգերի սառեցումը, ապա առաջարկը պետք է պարունակի ապացույցներ՝ տեխնիկական և գործնական (նմանատիպ սառնարանների /նմանատիպ սարքավորումներով/, տեղադրում և գործարկում Հայաստանի տարածքում), որ առաջարկվող սարքավորումները կկարողանան ապահովել սառնարանի հաստատուն աշխատանքը Հայաստանի գյուղական համայնքներում ոչ կայուն էլեկտրականության մատակարարման պայմաններում: Մպասարկումը պետք է լինի հնարավորինս պարզեցված՝ գյուղական համայնքներում մասնագիտացված սպասարկող անձնակազմի բացակայության պատճառով:

Հաշվի առնելով, որ տարբեր գործարանային ապրանքանիշերի հիմնական սարքավորումները (կոմպրեսոր, կոնդենսատոր, օդասառեցուցիչ) պահանջում են իրենց համապատասխան օժանդակ սարքավորումները և բաղադրիչները, ստորև ներկայացվում են բոլոր համայնքների, բոլոր խցերի չափերը և Q₀-ն՝ սառնարանային խցերի համար անհրաժեշտ հաշվարկային ցրտարտադրողականությունը, որոնք անհրաժեշտ են պահանջվող ջերմաստիճանը ապահովելու համար:

Ջերմաստիճանը սառնարանում պետք է լինի +2-ից մինչև +4 C° .

Սառնարինի ծավալն է 11,34 մ³, Q⁰= 1.9 Կվտ

Հիմնական և օժանդակ սարքավորումները և նրանց բոլոր բաղադրիչները պետք է լինեն նոր, չօգտագործված: